

Ռուզան Հ. Վիրաբյան

ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԸ ՆՈՐԱՅՐ ԱԳԱԼՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

Բանալի բառեր – չթեքվող խոսքի մասեր, մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն, եղանակավորող բառեր:

Չթեքվող խոսքի մասերը՝ մակբայը, կապը, շաղկապը, ձայնարկությունը և եղանակավորող բառերը, հուզաարտահայտչական տեսանկյունից ունեն սահմանափակ կիրառություն, սակայն ոճական առումով հետաքրքիր է դրանց օգտագործումը Ն. Ադայանի ստեղծագործություններում, ինչն արժանի է առանձին ուսումնասիրության:

Բացի գործողության հատկանիշից, մակբայները կարող են ցույց տալ նաև գործողության հետ առնչվող առարկայի հատկանիշի հատկանիշ, գործողության կամ այլ հատկանիշի հատկանիշ: «Մակբայը և՛ իմացաբանական կարգերով, և՛ ձևաբանական հատկանիշներով ունի սահմանափակ կիրառություն, ուստի ոճական, արտահայտչական առումով ևս նշույթավոր չէ: Համեմատաբար լայն կիրառություն ունեն ածանցներով կազմված մակբայները, որոնք հաճախ հանդես են գալիս իբրև հոմանշային զուգահեռ ձևեր և կիրառության տարբեր ոլորտներում դրսևորում են ոճական համապատասխան նրբերանգներ»¹:

Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը, նախորդների նման իրենց իմաստին համապատասխան, ունեն որոշակի ոճական արժեք, ինչպես՝

Հեղո ես ժպտում եմ, բայց նա շարունակում է նայել մի տխուր ու հուսահատ արտահայտությամբ²:

Դատավորը նորից սկսեց կարդալ նամակը, սակայն իսկույն նայեց անձանոթին³:

Ն. Ադայանը ժամանականիշ մակբայներով արտահայտում է հակա-նշային իմաստ.

– Երևի ու այսօր,– ասաց Մանեն՝ հազիվ իրեն ետ պահելով ամուս-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.02.2014:

1 Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2007, էջ 287:

2 Ադայան Ն. Մ., Ընտիր երկեր, Եր., 1986, էջ 34:

3 Նույն տեղում, էջ 37:

նու դրական պատասխանից⁴:

Գրողի ստեղծագործության մեջ հաճախ ենք հանդիպում **մեկ** թվականի կիրառությանը, որի կրկնությունը հանդես է բերում նաև ժամանակի մակբայի իմաստ.

Ես վստահ ու լուրջ ասացի, որ մայրիկս քաղաքից բացակայում է, լավ կլիներ, եթե մինչև նրա վերադառնալը մեկ-մեկ մեր տանը հանդիպենք⁵:

Ձևի մակբայներն արտահայտում են գործողության կամ առարկայի այլ հատկանիշի ներքին, ավելի քիչ նաև՝ արտաքին հատկանիշի իմաստ: Երբեմն գրողը ձևի մակբայների կրկնությունը մոտեցնում է խոսակցական լեզվին.

Արագ աշխատիր, արագ, առավոտվանից կանգնած ենք⁶:

Աստիճանները հաշվելով ես կամաց-կամաց բարձրանում եմ⁷:

Ն. Աղայանը ստեղծում է նաև բնության պատկերներ.

Լուսինը դանդաղ, ասես ծառերի միջից, շարժվում էր վերև՝ լճի անվրդով դեմքին խաղացնելով իր արծաթե շողերը⁸:

Հետաքրքիր կիրառություն ունեն անվանական կրկնավոր բարդությունները, որոնք հանդես են գալիս ձևի մակբայի իմաստային արժեքով՝ խոսքին հաղորդելով յուրահատուկ նրբերանգ.

Մեր ընտանիքը զուգված-զարդարված, մաքուր-մաքուր քայլում է փողոցով⁹:

Խումբ-խումբ և հազար-հազար մարդիկ հավաքվում են այս հողի վրա, այն երկրում, այստեղ ու այնտեղ, ստեղծում են տոհմ, ցեղ, ժողովուրդ, որպեսզի կյանքը լինի երջանիկ ու ապահով¹⁰:

Վերաբերմունք արտահայտելու տեսակետից զգալի թիվ են կազմում **-բար, -պես, -որեն** ածանցներով կազմված մակբայները, որոնց միջոցով գրողը ընդգծում է իր հերոսի ասելիքի կարևորությունը.

Դրախտի գետը դուրս ելավ ափերից և, ազահորեն լափիլզելով դաշտի հողն ու քարը, հարբած վիշապի նման փորսող գնաց...¹¹:

Քեզի խորապես կարգելեմ քարավանից հեռանալ¹²:

Ընդհակառակը, խաղաղասիրաբար եմ նայում ամեն ինչին¹³:

Չափի մակբայները, որոնք ցույց են տալիս գործողության կամ այլ հատկանիշի չափը.

Հոգին քուն-արթուն մշտապես ապրում է մարդու մարմնում, մարմինը նրա տունն է, բայց աշխարհում քիչ մարդիկ կան, որոնք գիտակցում են իրենց հոգին¹⁴:

4 Աղայան Ն. Մ., Տեսիլք, Եր., 2004, էջ 63:

5 Աղայան Ն. Մ., Խաղաղ գորանոցներ, Եր., 1973, էջ 33:

6 Աղայան Ն. Մ., Մենախոսության ժամեր, Եր., 1981, էջ 15:

7 Նույն տեղում, էջ 14:

8 Աղայան Ն. Մ., Խաղաղ գորանոցներ, Եր., 1973, էջ 225:

9 Աղայան Ն. Մ., Մենախոսության ժամեր, Եր., 1981, էջ 49:

10 Աղայան Ն. Մ., Խաղաղ գորանոցներ, Եր., 1973, էջ 57:

11 Աղայան Ն. Մ., Սև քառակուսի կարմիր անապատում, Եր., 2008, էջ 6:

12 Նույն տեղում, էջ 116:

13 Աղայան Ն. Մ., Մենախոսության ժամեր, Եր., 1981, էջ 5:

14 Աղայան Ն. Մ., Տեսիլք, Եր., 2004, էջ 48:

Նա դեռ չգիտե, որ ինքը արդեն դիակ է, ուրիշ, բոլորովին նոր բան¹⁵:

Լինելով նյութական իմաստից զուրկ խոսքի մաս՝ կապը ոճական սահմանափակ երանգավորում ունի և չունի ձևաբանական այլևայլ դրսևորումներ, շարահյուսական կիրառություններ: «Կապերի արտահայտչական հնարավորությունները բավականին համեստ են. դրանք հաճախ դրսևորվում են իրենց բնորոշ շարադասության խախտմամբ, կապի կրկնությամբ, ինչպես նաև որևէ հոլովածևի կապով և առանց կապի ձևերի զուգորդությամբ, որոնք, ի հայտ գալով որպես հոմանիշներ, թույլ են տալիս ընտրություն կատարել և տվյալ համատեքստի համար կիրառել առավել արտահայտչական ձևը»¹⁶:

Ն. Աղայանի ստեղծագործություններում հոմանշային արժեք ունեն կապերը և հանդես են գալիս համեմատության յուրօրինակ գունավորմամբ.

Ջոնն արձանի պես լուռ ու անշարժ մնաց¹⁷:

Նա մտածեց, որ դա ավելի լավն է, քան հնգաթև աստղը, կիսալուսինը, կարճ շղթան և նույնիսկ գանգակի նման կարկանդակը¹⁸:

Տարածական իմաստ արտահայտող կապերն ունեն ոճական ուրույն արժեք, որոնցից շատերն ունեն գրաբարյան ծագում.

Նա կուլ տվեց քաղցր դեղնածաղիկը և, գլուխը բարձրացնելով, նայեց դաշտին ու լեռն ի վեր¹⁹:

–**Ես կերթամ քալելով, կերթամ մայր Եփրատին հոսանքն ի վար²⁰:** Վերաբերության կապերը ևս հետաքրքիր կիրառություն ունեն.

Քաղաքացու, գրողի, հայ մարդու իմ աշխարհը ես փորձել ու փորձում եմ վերածել գրականության՝ գեղարվեստական խոսքի միջոցներով պատմել իր մասին²¹:

Հիմունքի և պատճառի կապեր.

Այդ պայրձառով էլ դրաման մշտապես ուղեկցում է պարզ թե բարդ մարդուն²²:

Նպատակի կապերը գունագեղ երանգ են հաղորդում խոսքին՝ ստեղծելով գրական–գեղարվեստական գեղեցիկ պատկեր.

Լուսինը կարոտ չէ մեր երգին, նրա համար երգում են աստղերը²³:

Մեջ կապը նախադասությանը հաղորդում է պարզություն, թարմություն, ժողովրդական մտածելակերպ, ապա իր գերադաս բառի հետ նպաստում է տողերի մյուս անդամների արտահայտչականությանը:

Մեջ կապը սեռական հոլովի հետ արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ.

15 Աղայան Ն. Մ., Ընտիր երկեր, Եր., 1986, էջ 48:

16 Մկրտչյան Ռ. Խ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Եր., 1992, էջ 269:

17 Աղայան Ն. Մ., Պարականոն վիպակներ և պատմվածքներ, Եր., 2012, էջ 110:

18 Աղայան Ն. Մ., Կարկանդակներ, Եր., 1964, էջ 14:

19 Աղայան Ն. Մ., Սև քառակուսի կարմիր անապատում, Եր., 2008, էջ 83:

20 Տեն նույն տեղում, էջ 17:

21 Աղայան Ն. Մ., Մենախոսություն ժամանակի հետ, Եր., 2006, էջ 207:

22 Աղայան Ն. Մ., Հավասարումներ, Եր., 2009, էջ 7:

23 Նույն տեղում, էջ 47:

Մի քանի բույս թե դար, օձն անհացավ նրա մտապատկերից, երբ թաքնվեց թաց-կանաչ խոտերի մեջ²⁴:

Գրողի ստեղծագործություններում սակավաթիվ է մեջ կապի հետևյալ կիրառությունը՝

Նրա մեջ նվագում էր մարդկության կուլտուրան²⁵:

Միջև կապը ցույց է տալիս երկու կամ ավելի առարկաների կամ անձերի միջև եղած տարածական հարաբերություն, ինչի մասին է վկայում գրողի հետևյալ միտքը՝

...Հարաբերություն երկու և ավելի մարդկանց միջև, և՛ իբրև մե-նախոսություն²⁶:

Վրա կապն ունի ոճական երանգավորում՝

–Քարին իջնե աշխարքի և ամենիս վրա,– եղավ պատասխանը²⁷:

Վրա կապն ունի նաև ոճական սխալ կիրառություն, որը հիմնականում հանդես է գալիս հերոսների խոսակցական լեզվի մեջ.

Ամեն անգամ Անահիտը մեկ նամակ էր ստանում և արդեն սկսում էր կասկածել Պերձի վրա²⁸:

Ոճականորեն հարուստ նրբերանգներ ունի **հետ** կապը.

–Աստված մեզի հեպ է,– անվերջ կրկնում էր Ներսեսը²⁹:

Այսուհետև նա իր երջանկությունն է, օր ու գիշեր քայլելու է նրա հեպ, իր բրաբիոնն է, նրա հետ է մեռնելու³⁰:

Դերանվան գործածությունը մոտ կապի հետ հաճախ է դրսևորվում առօրյա խոսքում.

Հետո ես իմ մոտի փողերը կորցրի...³¹:

Շաղկապների դերը խոսքում ձևաբանական է և շարահյուսական, որոնք արտահայտում են ինչպես բառերի, այնպես էլ նախադասությունների զանազան հարաբերություններ: Թեև շաղկապը դիտվում է նյութական իմաստից զուրկ խոսքի մաս, սակայն այն արտահայտում է նաև ինքնուրույն բառային իմաստ, որն ապահովում է շաղկապի ոճական կիրառությունը լեզվի մեջ: «Շաղկապներն այն բառերն են, որոնց միջոցով տրամաբանական զանազան կարգի առնչություններ և հարաբերություններ են արտահայտում, որ գոյություն ունեն ինչպես նախադասության կազմում բառ-հասկացությունների, բարդ նախադասության մեջ նրա կազմիչներով արտահայտված մտքերի, այնպես էլ խոսքի մեջ անկախ նախադասություններով արտահայտված մտքերի միջև»³²:

Գրողը շաղկապների ոճական արժեքը ներկայացնում է կիրառության տարբեր ոլորտներում, որոնք գործածվում են և՛ ժողովրդախոսակցական, և՛ գրական, և՛ գրքային, վերամբարձ ոճերում:

24 Աղայան Ն. Մ., Միջնանոց, Եր., 2006, էջ 15:

25 Աղայան Ն. Մ., Հավասարումներ, Եր., 2009, էջ 18:

26 Աղայան Ն. Մ., Քննադատության ժամանակը, Եր., 1977, էջ 206:

27 Աղայան Ն. Մ., Սև քառակուսի կարմիր անապատում, Եր., 2008, էջ 36:

28 Աղայան Ն. Մ., Ետ մի նայիր, Եր., 1963, էջ 121:

29 Աղայան Ն. Մ., Սև քառակուսի կարմիր անապատում, Եր., 2008, էջ 276:

30 Նույն տեղում, էջ 250:

31 Աղայան Ն. Մ., Մենախոսություն ժամանակի հետ, Եր., 2006, էջ 141:

32 Պողոսյան Պ. Մ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Եր., 1990, էջ 322:

Ժողովրդախոսակցական ոլորտում շաղկապներն ունեն արտահայտ-
չականություն.

**Մի քիչ հանգստանանք, էլի, հանգիստ ապրենք, մենականանք,
գլուխներս խաղաղվի, վայ**³³:

Երբեմն խոսակցական լեզվի մեջ իսկ շաղկապը փոխվում է **բա** ձևի.

-Բա ինչի հիմա չի ծխում...³⁴:

Ժողովրդախոսակցական ոճում գործածական է հակադրություն ար-
տահայտող **ախր** շաղկապը, որը գեղարվեստական խոսքում ոճական
որոշակի երանգավորում ունի.

**Նայելով հերթից դուրս եկող լիքը ցանցերին, ուրախության ու
հպարտության մի խառն զգացմունք հանկարծ լցվում է սիրտս. ախր,
սա մեր գործարանի արտադրանքն է, մերը, մերը**³⁵:

Վերամբարձ ոճում հանդես են գալիս **գրաբարյան ձևերը**, որոնք ու-
նեն հիմնականում գրքային կիրառություններ.

**Քու ճամփադ շտկե՛ իմ առջևս, արդարությունովդ ինձի առաջնորդ
եղիր ընդդեմ թշնամիներուս, վասն՞ զի անոնց բերնին մեջ ճշմար-
տություն չկա, անոնց ներսդին չարություն կա, անոնց կոկորդը բաց
գերեզման է**³⁶:

Ո՛վ Աստված, զիս պահե, զի քեզի հուսացի³⁷:

Ու շաղկապով միանում են ավելի մոտ, ավելի սերտ հարաբերություն
ունեցող բաղադրիչները՝ կազմելով անվանական և կրկնավոր բարդու-
թյուններ.

- Խոսում էիր քեզ ու քեզ³⁸:

Խորենը տուն ու տեղ ունի, բայց կով չունի³⁹:

Շառլին փոխարինում է խեղճ ու կրակ մի մարդ⁴⁰:

Ոճական երանգավորում ունեն նաև որոշ **զուգահրակական շաղկապ-
ներ**.

**Գոգահովիտը վերջնականապես համրանում էր ոչ միայն իր երկն-
քի ձյան ծանրությունից, այլև մերձակա սարալանջերի ձյուների, որոնց
երբեմն արթնացող քամին պտտահողմով բարձրացնում, քշում, կու-
տակում էր այդտեղ**⁴¹:

Եղանակավորող բառերը լայն կիրառություն ունեն Ն. Ադայանի ստեղ-
ծագործություններում, միաժամանակ արտահայտում են խոսողի մտածա-
կան վերաբերմունքը, երանգավորում են նաև նրա որևէ անդամի իմաստը:

Հաստատական եղանակավորիչներն արտահայտում են հաղորդվող
նյութի, ասվածի հավաստի, հաստատական, ստույգ, ճշգրիտ լինելը, իսկ
ամենատարածված ու գործածական պատասխանը «**այո՛**» բառն է, խո-
սակցական «**հա՛**» տարբերակով, որը որպես պատասխան հաճախ կարող

33 Ադայան Ն. Մ., Մենախոսության ժամեր, Եր., 1981, էջ 4:

34 Ադայան Ն. Մ., Կապույտ Երզնկա, Եր., 1985, էջ 174:

35 Ադայան Ն. Մ., Մենախոսության ժամեր, Եր., 1981, էջ 15:

36 Ադայան Ն. Մ., Սև քառակուսի կարմիր անապատում, Եր., 2008, էջ 233:

37 Նույն տեղում, 234:

38 Ադայան Ն. Մ., Տեսիլք, Եր., 2004, էջ 59:

39 Ադայան Ն. Մ., Շոգ ամառ, Եր., 1965, էջ 17:

40 Ադայան Ն. Մ., Մենախոսության ժամեր, Եր., 1981, էջ 11:

41 Ադայան Ն. Մ., Սիջնանոց, Եր., 2006, էջ 7:

է փոխարինել ամբողջ նախադասությանը՝ դրանով իսկ նպաստելով ոճի սեղմությանը.

- Այո՛, - ես տորթ եմ պատրաստելու, իսկ նա ապրանք է ընդունելու⁴²:
- Արմեն դու՛ ես:
- Հա, հա⁴³:

Ժխտական եղանակավորիչները հիմնականում ոչ՛ և չէ՛ ձևերն են, որոնք այո՛ և հա՛մ հաստատականների հականիշներն են, որոնցից «չէ» ժխտականը գործածվում է լեզվի ժողովրդախոսակցական ոլորտում, հաճախ նաև գեղարվեստական գրականության մեջ: Սրանք հիմնականում գործածվում են ժխտական նախադասություններում արդեն իսկ տրված հարցերին ժխտողական, մերժողական պատասխան տալու համար.

-2է՛, չէ՛... ցանցն ու շերք տու՛ր, ես կգնամ, ես կգնամ, դու լվացք արա,- վճռականորեն ասում եմ ես և սրտիս շուրջը խտուտներ զգում, հետո՝ վայրկենական մի ցավ⁴⁴:

-Ո՛չ,- հաստատ ու կտրուկ ասում եմ ես⁴⁵:

Ցուցական ահավասիկ եղանակավորող բառը ոճականորեն չեզոք է, կիրառելի է գրաբարում, սակայն այն յուրահատուկ կիրառություն ունի գրողի ստեղծագործության մեջ.

Փամբուլս մեծ մայրիկը հիմա էլ, ահավասիկ, աչքիս առջևն է՛⁴⁶:

Սահմանափակման իմաստ արտահայտող եղանակավորող բառեր.

Միայն դրանից հետո Սահակի կասկածանքները փարատվեցին՝ նա է՛⁴⁷:

Սաստկական եղանակավորող բառերը, դրվելով շարահյուսական կառույցի այս կամ այն անդամի վրա, ընդգծում են այն, սաստկություն հաղորդում համատեքստում ներկայացված փաստի, երևույթի, առարկայի, գործողության նկարագրությանը.

Մեծ վեպը մարդու մաքառումն է իրենից դուրս աշխարհի դեմ, երբ նա հաղթում է նայնիսկ պարտվելու դեպքում՛⁴⁸:

Սրանք արտահայտում են երկբայական-հավանական, երկբայական-անհավանական և երկբայական-հարցական իմաստներ.

Գուցե բնիկ էին, ինչպես թուփ ու ծառեր, մողեսը, օձը, մրջյունը, հայերեն խոսող քարն ու մարդը՛⁴⁹:

Դա, ըստ երևույթին, սրճարանում հայտնված անտեր-թափառական շուն էր՝ տիրոջ փաղաքշանքի կարոտ ու ծարավ:

Երկխոսություններում ոճականորեն առավել գործածական է «միթե» եղանակավորիչը հարցական հնչերանգով, որն արտահայտում է անհամաձայնություն, դժգոհություն, ժխտում, ոճական որոշակի երանգավորմամբ հաճախ արտահայտում է նաև ձարտասանական հարցում.

42 Աղայան Ն. Մ., Բենական փորձ, Եր., 2003, էջ 29:

43 Աղայան Ն. Մ., Մենախոսության ժամեր, Եր., 1981, էջ 19:

44 Նույն տեղում, էջ 15:

45 Աղայան Ն. Մ., Մենախոսության ժամեր, Եր., 1981, էջ 16:

46 Աղայան Ն. Մ., Եփրատ, Եր., 1990, էջ 247:

47 Աղայան Ն. Մ., Միջանոց, Եր., 2006, էջ 94:

48 Նույն տեղում, էջ 39:

49 Նույն տեղում, էջ 3:

Դատավոր – Միթե դուք չեք տեսնում, դատապաշտպան Հովասափյան⁵⁰:

Խոսողի զգայական վերաբերմունքն է արտահայտված հետևյալ տողում.

Ցավոք սրտի, ավելի քիչ են այն մարդիկ, որոնք իրենց հոգում Աստված են կրում, այդ պատճառով էլ աշխարհն ու մարդկությունը հնուց ի վեր առ այսօր, զգալի չափով թաղված են ստի, անարդարության ու դաժանության, ծովածավալ ճահճում⁵¹:

«Ձայնարկություններն ընդհանրապես այլ խոսքի մասերից տարբերվում են նաև առոզանությամբ, զգացականների դեպքում արտահայտվում է բացականչությամբ, կոչականների դեպքում՝ շեշտով, իսկ նմանաձայնականների դեպքում՝ բացականչությամբ կամ շեշտով»⁵²:

Գրողը բացականչական ձայնարկություններով արտահայտում է հերոսների զգացմունքները՝ ուրախություն, վիշտ, ցավ, հիացմունք, զարմանք, իսկ կոչական ձայնարկությունները հիմնականում գործածում է խոսակցի ուշադրությունը գրավելու համար.

Դէ, Արմեն Սահակյան, մկաններդ լարիր, ողնաշարդ պնդացրո՛ւ, քսան կիլո քաշիր-հանիր տասներկուերորդ հարկ⁵³:

– **Օհո՛ն,**– բացականչեց Մելքոն Տեր-Պերպերյանը⁵⁴:

Ա՛յ, Աբովյան կոչվող փողոց...⁵⁵:

«**Պահ, դու ինչ ես, որ**»⁵⁶:

Վերջապես, ՕՖ, հրելով, հրմշտվելով դուրս ենք գալիս շուկայից⁵⁷:

– **Ա՛յ մարդ, մարդավարի ներս ու դու՛րս արեք, կոճակները մարդավարի հու՛յ տվեք, շատ բան չենք ուզում՝ մարդավարի, ինչ մի դժվար բան է մարդավարին⁵⁸:**

– **Թու՛...⁵⁹:**

– **Վայ, պարտվածներին⁶⁰:**

Ոճական ուրույն կիրառություններ ունեն նաև բնաձայնական կամ նմանաձայնական բառերը, որոնց միջոցով հատկապես հնարավոր է դառնում վերարտադրել կենդանիների, առարկաների, բնության տարբեր երևույթների ձայները.

– **Փր՛ջբ...,- միշտ փշտացնում էր ջրմուղագործ Պետրոսը:**

– **Հի- հի- հիի՛,- քրքջում էր աշկերտ Շմոն⁶¹:**

Գրողի ստեղծագործության մեջ հետաքրքիր են մակբայների իմաստային կիրառությունները, կապի և շաղկապի ոճական կիրառությունները,

50 Աղայան Ն. Մ., Բեմական փորձ, Եր., 2003, էջ 54:

51 Աղայան Ն. Մ., Հավասարումներ, Եր., 2009, էջ 41:

52 Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու, Եր., 2007, էջ 317:

53 Աղայան Ն. Մ., Մենախոսության ժամեր, Եր., 1981, էջ 14:

54 Աղայան Ն. Մ., Եփրատ, Եր., 1990, էջ 279:

55 Աղայան Ն. Մ., Կինը և տղամարդը, Եր., 1999, էջ 17:

56 Աղայան Ն. Մ., Կարկանդակներ, Եր., էջ 5:

57 Աղայան Ն. Մ., Մենախոսության ժամեր, Եր., 1981, էջ 13:

58 Նույն տեղում, էջ 20:

59 Նույն տեղում, էջ 18:

60 Աղայան Ն. Մ., Բեմական փորձ, Եր., 2003, էջ 8:

61 Աղայան Ն. Մ., Դավայաթաղ, Եր., 1997, էջ 11:

որոնց գրողը գործածում է ն՛ ժողովրդախոսակցական, ն՛ գրական, ն՛ գրքային, վերամբարձ ոճերում, ինչպես նաև եղանակավորող բառերն ու ձայնարկությունները, որոնք ավելի շատ գործածված են ժողովրդախոսակցական լեզվի մեջ:

Այսպիսով, Ն. Ադալյանի ստեղծագործություններում չթեքվող խոսքի մասերի ոճական արժեքի քննությունը ցույց է տալիս, որ նշված խոսքի մասերը նույնպես ունեն արտահայտչական հնարավորություններ և իրենց երանգավորմամբ յուրահատուկ փայլ են հաղորդում գրողի ստեղծագործությանը:

Ռուզան Հայկի Վիրաբյան – Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ: Ատենախոսության թեման է՝ «Նորայր Ադալյանի ստեղծագործության լեզուն»:

Summary

THE STYLISTIC USAGE OF INDECLINABLE PARTS OF SPEECH IN NORAYR ADALYAN'S WRITINGS

Ruzan H. Virabyan

Stylistic significance, emotionally-expressive coloring of indeclinable parts of speech is quite limited compared to the previous group of parts of speech. However, these parts of speech have a very interesting and peculiar application in writer's works.

The most typical use of adverbs is the designation of temporal, spatial, qualitative, quantitative, and other signs of action.

Expressive possibilities of prepositions are rather poor. They are reflected in structure of the sentence by their repetition, by means of connection with a particle and its parallel usage.

The role of conjunctions is syntactical and morphological which are expressed both by words and sentences.

Modal words that express the speaker's attitude to the above, also define the meaning of any part of speech, giving it a distinctive color.

The interjections differ from other parts of speech by their pronunciation, by stress, interjection.

Thus, observation of the stylistic value of Norayr Adalyan's works shows that parts of speech, such as adverb, conjunction, particles, modal words, interjection also have expressive means and affect the writer's works with their bright colours.

СТИЛИСТИЧЕСКОЕ ПРИМЕНЕНИЕ НЕСКЛОНЯЕМЫХ ЧАСТЕЙ РЕЧИ В ПРОИЗВЕДЕНИЯХ НОРАЙРА АДАЛЯНА

Рузан Г. Вирабян

Стилистическая значимость, эмоционально-выразительная окраска несклоняемых частей речи довольно ограничена по сравнению с предыдущей группой частей речи. Однако интересное применение этих частей речи в произведениях писателя придает им своеобразную экспрессию.

Самым характерным применением наречия является обозначение временных, пространственных, качественных, количественных и других признаков действия.

Выразительные возможности предлогов достаточно скромны, они проявляются в нарушениях свойственного им места в предложении, в повторениях предлогов, а также в сочетании предложно-падежной и беспредложной форм.

Роль союзов в речи морфологическая и синтаксическая, они отражают различные связи как слов, так и предложений.

Модальные слова, которые выражают отношение говорящего к сказанному, определяют также смысл той или иной части речи, придавая ей своеобразную окраску.

Таким образом, анализ стилистической значимости несклоняемых частей речи в произведениях Норайра Адаляна показал, что указанные части речи: наречие, предлог, союз, междометия, модальные слова – также имеют выразительные возможности и своей окраской придают своеобразный блеск произведениям писателя.